



**ՀՔԱ Վանաձորի գրասենյակի առաջարկությունները՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում
լրացուցիչ արտոնություն սահմանելու և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի
270.1 հոդվածում լրացում կատարելու վերաբերյալ**

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 24-րդ և 25-րդ հոդվածներում, համապատասխանաբար, նոտարական գործողություններ և քաղաքացիական կացության ակտերի գրանցում իրականացնող մարմիններում պետական տուրքի գծով արտոնություն նախատեսել նաև դատապարտյալների համար:

2. Անձին անգործունակ ճանաչելու, ոչ հոժարակամ հոսպիտալացման և ոչ հոժարակամ հետազոտության և/կամ բուժման ենթարկելու վերաբերյալ վերջնական դատական ակտերն այդ անձի կամ վերջինիս ներկայացուցչի միջոցով բողոքարկելու իրավունքի պատշաճ իրացման նպատակով այդ ֆիզիկական անձանց վերաքննիչ և վճարելի բողոքների համար ազատել պետական տուրք վճարելու պարտականությունից՝ Օրենքի 22-րդ հոդվածում արտոնություն նախատեսելով:

3. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 270.1 հոդվածի 1-ին մասում նախատեսել քաղաքացու, նրա ընտանիքի անդամների իրավունքը՝ դիմելու դատարան հոգեբուժական հիվանդանոցային ոչ հոժարակամ բուժման ենթարկելու վճիռը վերացնելու պահանջով:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

1. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու վերաբերյալ

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 22-րդ հոդվածը սահմանում է դատարաններում պետական տուրքի գծով արտոնությունները: Նույն օրենքի 24-րդ և 25-րդ հոդվածներով նախատեսվում է համապատասխանաբար նոտարական գործողություններ և քաղաքացիական կացության ակտերի գրանցում իրականացնող մարմիններում պետական տուրքի գծով արտոնությունները: Օրենքը չի նախատեսում արտոնություն դատապարտյալների համար դատարաններում, նոտարական գործողություններ իրականացնող և քաղաքացիական կացության ակտերի գրանցում իրականացնող



մարմիններում հանդես գալիս, մինչդեռ կարևոր է առավել խոցելի վիճակում հայտնված անձանց համար պետական տուրքի արտոնությունների սահմանումը: Օրենսդիրը դատավարական պահանջների ներկայացման, նոտարական և այլ մարմիններում գործողությունների կատարման իրավունքի իրացումը, ի թիվս այլնի, պայմանավորել է օրենքով սահմանված չափով պետական տուրք վճարելու պահանջով, մինչդեռ դատապարտյալները, հիմնականում չունենալով կանոնավոր եկամուտ, չեն կարողանում պատշաճ իրացնել իրենց իրավունքները: Մասնավորապես, ՀՔԱՎ գրասենյակի դիմումատու-դատապարտյալը հայտնել է, որ ցանկանում է ամուսնալուծվել, սակայն, գույքային դրությունից ելնելով, չի կարող վճարել ամուսնալուծության գրանցման համար օրենքով նախատեսված պետական տուրքի գումարը:

Օրենքի 31-րդ հոդվածը սահմանում է այն սուբյեկտների ցանկը, ովքեր կարող են առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական տուրքի գծով արտոնությունների սահմանել:

Ազատությունից զրկված անձինք դատարաններում հանդես գալիս կարող են ներկայացնել պետական տուրքի վճարման արտոնություն կիրառելու միջնորդություն և հետաձգել կամ ազատվել պետական տուրքի վճարումից, քանի որ դատարանները կամ դատավորները Օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ իրավասու են կիրառել նման արտոնություն՝ ելնելով կողմի գույքային դրությունից, սակայն այլ մարմինների հետ հարաբերություններում նման միջնորդություններով կամ դիմումներով դատապարտյալները հանդես գալ չեն կարող, քանի որ նոտարները կամ քաղաքացիական կացության ակտերի գրանցում իրականացնող մարմինները լիազորված չեն կիրառել պետական տուրքի վճարման արտոնություն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք Օրենքի 24-րդ և 25-րդ հոդվածներում համապատասխանաբար նոտարական գործողություններ և քաղաքացիական կացության ակտերի գրանցում իրականացնող մարմիններում պետական տուրքի գծով արտոնություն նախատեսել նաև դատապարտյալների համար:

Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ, 20-րդ և 21-րդ հոդվածների համաձայն.

«1. Դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են՝ 18) դիմողները՝ քաղաքացուն անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու, անգործունակ ճանաչված քաղաքացուն գործունակ ճանաչելու կամ քաղաքացու գործունակության սահմանափակումները վերացնելու վերաբերյալ դիմումներով, (...) 20) հոգեբուժական կազմակերպությունները՝ քաղաքացուն հոգեբուժական կազմակերպություն ոչ հոժարակամ



հոսպիտալացման ենթարկելու վերաբերյալ դիմումներով, 21) բժշկական կազմակերպությունները կամ առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը՝ քաղաքացուն բժշկական ոչ հոժարակամ հետազոտության և (կամ) բուժման ենթարկելու վերաբերյալ դիմումներով»:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածի 1-ին մասում նշված անձինք տուրքի վճարումից ազատվում են նաև դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար»:

Օրենքը անձին անգործունակ ճանաչելու, ոչ հոժարակամ հոսպիտալացման և ոչ հոժարակամ հետազոտության և (կամ) բուժման ենթարկելու դիմումներով հանդես եկող անձանց ազատել է պետական տուրքի վճարման պարտականությունից, այդ թվում դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների ներկայացման դեպքում, մինչդեռ այն անձինք, ում իրավունքների և ազատությունների վերաբերյալ նշված դատական ակտերը կայացվում են, ստիպված են վճարել պետական տուրք իրենց նկատմամբ կայացված դատական ակտերի բողոքարկման դեպքում: Ստացվում է, որ անգործունակ ճանաչելու, ոչ հոժարակամ հոսպիտալացման և ոչ հոժարակամ հետազոտության և (կամ) բուժման ենթարկելու վերաբերյալ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք ներկայացնելու համար սահմանված պետական տուրքի վճարումից օրենքով ազատված չլինելու պայմաններում այդ անձինք հայտնվում են ակնհայտ անհավասար պայմաններում ի համեմատ նշված գործերով դիմողների, և նման իրավակիրառ պրակտիկայի արդյունքում դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ոչ հոժարակամ հոսպիտալացման և ոչ հոժարակամ հետազոտության և (կամ) բուժման ենթարկվող անձն ըստ էության զրկվում է դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնարար իրավունքի բաղադրատարր հանդիսացող՝ դատական ակտը բողոքարկելու իրավունքի երաշխավորված իրացման հնարավորությունից: Բացի այդ, իր գործունակության, ոչ հոժարակամ հոսպիտալացման և բուժման վերաբերյալ հարցի քննության արդյունքում կայացված վերջնական դատական ակտի բողոքարկման համար սահմանված պետական տուրքից ազատված չլինելը չունի որևէ օբյեկտիվ հիմք և չի կարող հետապնդել որևէ իրավաչափ նպատակ այն պայմաններում, երբ նշված հատուկ վարույթներով դիմողների նկատմամբ արտոնության սահմանված է Օրենքով: Նշված իրավակարգավորումը խնդրահարույց է նաև խտրականության արգելքի սկզբունքի համատեքստում:

ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/1324/02/12 քաղաքացիական գործով 2016 թվականի հունվարի 20-ին կայացված որոշմամբ արձանագրել է, որ «պետք է հիմք ընդունվի այն



Էլակետային դրույթը, որ ֆիզիկական անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ դատական ակտերի դեմ այդ անձի կողմից բողոք բերելու հնարավորության առկայությունը և նրա խախտված իրավունքները վերականգնելը համարվում են սահմանադրական անվերապահ պահանջ՝ մարդու հիմնարար իրավունք, իսկ այն իրացնելու օրենսդրական ընթացակարգերը չեն կարող խաթարել այդ իրավունքի բուն էությունը կամ օրենքի բացի արդյունքում արգելափակել այն: Վճռաբեկ դատարանն արդարացված չի համարում այն իրավիճակը, երբ ֆիզիկական անձի անգործունակության հարցի քննության արդյունքում կայացված դատական ակտը բողոքարկելիս անգործունակ ճանաչվող անձի համար չի նախատեսվում պետական տուրքի վճարումից ազատելու արտոնություն այն դեպքում, երբ նման դիմում ներկայացրած անձը ազատված է պետական տուրքի վճարումից: Առկա իրավակարգավորման պայմաններում լիարժեք կերպով չի երաշխավորվում հոգեկան խանգարումներ ունեցող անձի՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնարար իրավունքը՝ խոչընդոտելով վերջինիս՝ իրեն անգործունակ ճանաչելու վերաբերյալ դատական ակտի բողոքարկման իրավունքի իրավաչափ ու արդյունավետ իրացումը: Գործող իրավակարգավորումը վկայում է, որ կիրառված միջոցի և հետապնդված նպատակի միջև չկա ողջամիտ համաչափություն. ստեղծվել է ոչ իրավաչափ հավասարակշռություն անձի խախտված իրավունքների վերականգնման և պետության շահերի պաշտպանության միջև, որն աղավաղում է դատական ակտի բողոքարկման սահմանադրական իրավունքի էությունը: Բացի այդ, ֆիզիկական անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործերի քննության առնչությամբ դատական ծախսերի գծով արտոնություն սահմանելու հարցում օրենսդիրը տարբերակված մոտեցում է ցուցաբերել, մի կողմից, այդ գործերը դատարանում հարուցելու իրավասություն ունեցող սուբյեկտների և, մյուս կողմից, այն ֆիզիկական անձանց միջև, ում անգործունակ ճանաչելու հարցը քննության է առնվում այդ գործերով»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ «խտրականությունը էապես նման իրավիճակում գտնվող անձանց նկատմամբ տարբեր վերաբերմունքի դրսևորում է՝ առանց որևէ օբյեկտիվ հիմքերի և որևէ ողջամիտ բացատրության»¹:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ «ֆիզիկական անձի՝ իր գործունակության վերաբերյալ հարցի քննության արդյունքում կայացված վերջնական դատական ակտի բողոքարկման համար սահմանված պետական տուրքից ազատված չլինելը չունի որևէ օբյեկտիվ հիմք և չի կարող հետապնդել որևէ իրավաչափ նպատակ: Հետևաբար, պետական

¹ Տե՛ս Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի ՄԻԵԴ վճիռը (թիվ 40094/05, 02.10.2012թ., § 199):



տուրքի վճարման գծով արտոնություն սահմանելու հարցում ֆիզիկական անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործի հարուցման իրավասություն ունեցող սուբյեկտների և այդ ֆիզիկական անձի միջև ցուցաբերվող տարբերակված մոտեցումը հանդիսանում է խտրականության արգելքի սկզբունքի խախտում, ինչը չի կարող համահունչ լինել իրավական պետությանը և ժողովրդավարական հասարակությանը ներկայացվող պահանջներին»:

Հարկ է նշել, որ Վճռաբեկ դատարանի վերը նշված դիրքորոշումը կիրառելի է ոչ միայն անգործունակ ճանաչելու հատուկ վարույթի, այլ նաև ոչ հոժարակամ հոսպիտալացման և ոչ հոժարակամ հետազոտության և/կամ բուժման վարույթների նկատմամբ, քանի որ որոշմամբ առկա հիմնավորումները հավասարապես վերաբերելի են նաև այդ վարույթներին:

Հաշվի առնելով վերոգրյալը, առաջարկում ենք անձին անգործունակ ճանաչելու, ոչ հոժարակամ հոսպիտալացման և ոչ հոժարակամ հետազոտության և/կամ բուժման ենթարկելու վերաբերյալ վերջնական դատական ակտերն այդ անձի կամ վերջինիս ներկայացուցչի միջոցով բողոքարկելու իրավունքի պատշաճ իրացման նպատակով այդ ֆիզիկական անձանց վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար ազատել պետական տուրք վճարելու պարտականությունից՝ Օրենքի 22-րդ հոդվածում արտոնություն նախատեսելով:

2. ՀՀ քաղաքացիական դատավարության 270.1 հոդվածում լրացում կատարելու վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության 236-րդ հոդվածը նախատեսում է անձին հոգեբուժական կազմակերպություն ոչ հոժարակամ հոսպիտալացման ենթարկելու և քաղաքացուն բժշկական հարկադիր հետազոտության և (կամ) բուժման ենթարկելու վերաբերյալ գործերը որպես հատուկ վարույթի գործեր:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 266-րդ հոդվածի համաձայն՝ «Քաղաքացուն հոգեբուժական կազմակերպություն ոչ հոժարակամ հոսպիտալացման ենթարկելու վերաբերյալ դիմում ներկայացնելու իրավունք ունի այն հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմինը, որում գտնվում կամ բուժվում է քաղաքացին»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 272-րդ հոդվածի համաձայն՝ «Քաղաքացուն բժշկական ոչ հոժարակամ հետազոտության և (կամ) բուժման ենթարկելու վերաբերյալ դատարան դիմում տալու իրավունք ունի այն բժշկական կազմակերպությունը, որտեղ բուժվում է տվյալ քաղաքացին, կամ առողջապահության ոլորտում Կառավարության լիազորած մարմինը»:



Օրենսդիրը ոչ հոժարական հոսպիտալացման և ոչ հոժարական բուժման ենթարկելու դիմումներով հանդես գալու իրավասությամբ է օժտել միայն համապատասխան բժշկական կազմակերպությանը (գործադիր մարմնին), սակայն տարբերակված մոտեցում է ցուցաբերել քաղաքացուն հոգեբուժական կազմակերպություն ոչ հոժարական հոսպիտալացման և ոչ հոժարական բուժման ենթարկելու վերաբերյալ վճիռների վերացման դիմում ներկայացնելու իրավասություն ունեցող անձանց միջև: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 270.1 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քաղաքացուն հոգեբուժական հիվանդանոցային ոչ հոժարական բուժման ենթարկելու վերաբերյալ դատարանի վճռով սահմանված ժամկետից շուտ անձի ապաքինվելու դեպքում այն *բժշկական կազմակերպության դիմումով*, որտեղ բուժվում է տվյալ քաղաքացին, հոգեբուժական հանձնաժողովի եզրակացության հիման վրա դատարանը վճիռ է կայացնում քաղաքացուն հոգեբուժական կազմակերպություն ոչ հոժարական հոսպիտալացման ենթարկելու վերաբերյալ վճիռը վերացնելու մասին»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 276 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Քաղաքացուն ոչ հոժարական բուժման ենթարկելու վերաբերյալ դատարանի վճռով սահմանված ժամկետից շուտ անձի ապաքինվելու դեպքում *տվյալ քաղաքացու, նրա ընտանիքի անդամների, այն բժշկական կազմակերպության, որտեղ բուժվում է տվյալ քաղաքացին, առողջապահության ոլորտում Կառավարության լիազորած մարմնի կամ ոչ հոժարական բուժում իրականացնող բժշկական կազմակերպության գտնվելու վայրի խնամակալության և հոգաբարձության մարմնի դիմումով* և համապատասխան բժշկական եզրակացության հիման վրա դատարանը վճիռ է կայացնում քաղաքացուն ոչ հոժարական բուժման ենթարկելու վերաբերյալ նախկինում կայացված վճիռը վերացնելու մասին»:

Անհասկանալի է, թե ինչու՞ է անձը կամ նրա ընտանիքի անդամը զրկված հոգեբուժական հիվանդանոցային ոչ հոժարական բուժման ենթարկելու վճիռը վերացնելու դիմումով հանդես գալու իրավունքից այն դեպքում, երբ համանման (ոչ հոժարական բուժման, անգործունակ ճանաչելու) դեպքերում նման իրավունք անձին վերապահված է և բացի այդ վճիռը անմիջականորեն առնչվում է տվյալ անձի իրավունքներին և օրինական շահերին: Մասնավորապես նման իրավունք վերապահված է անձին նաև անգործունակ ճանաչելու հատուկ վարույթի շրջանակներում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 255-րդ հոդվածի համաձայն «1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված դեպքերում դատարանն անգործունակ ճանաչված քաղաքացու, նրա խնամակալի, ընտանիքի անդամի կամ հոգեբուժական կազմակերպության դիմումով դատահոգեբուժական փորձաքննության



համապատասխան եզրակացության հիման վրա վճիռ է կայացնում քաղաքացուն գործունակ ճանաչելու մասին: Դատարանի եզրափակիչ դատական ակտի հիման վրա վերացվում է քաղաքացու նկատմամբ սահմանված խնամակալությունը: 2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված դեպքերում դատարանը քաղաքացու, նրա հոգաբարձուի կամ ընտանիքի անդամի դիմումով վճիռ է կայացնում քաղաքացու գործունակության սահմանափակումը վերացնելու մասին: Դատարանի եզրափակիչ դատական ակտի հիման վրա վերացվում է քաղաքացու նկատմամբ սահմանված հոգաբարձությունը»:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 270.1 հոդվածի 1-ին մասում նախատեսել տվյալ քաղաքացու, նրա ընտանիքի անդամների իրավունքը՝ դիմելու հոգեբուժական հիվանդանոցային ոչ հոժարակամ բուժման ենթարկելու վճիռը վերացնելու պահանջով: